*Ձիւնարն օրօրւեց, անմիտ կրքով լի*
*Ընկաւ վտակի գիրկը կատաղած...*
*Ու վայրենու պէս, անխնայ հեւքով*
*Մատաղ չինարը պաղ գրկում՝ սեղմած*
*Առաջ սլացաւ վտակն հրճւանքով։*
*Բայց ճանապարհին, աւազոտ ափում*
*Նա դուրս շպրտեց մատաղ չինարին,*
*Դեռ չհասցրած իր նպատակին.*
*Իսկ ինքը ծածկւեց այն անհուն հեռւում,*
*Ուր վերջալոյսն էր նազանքով մարում*
*Ու ծովի կապոյտ ալիքը պարում։*

(Թարգմ. В. Л. Величко-ից) Ե. Ս.

---

## ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒ.

*Դեղնած ու թօշնած, ó, տերև աշնան,*
*Սիւն, ունայնութեան պատկեր թառամած.*
*Մահաշունչ, սարսիչ, սուկումի նշան,*
*Մահ ես շշնջում, մրմնջում կամաց...*

*Վաղուց չէ, տերև՛, կեանք էիր բուրում,*
*Նայում կենսուրախ, կանաչով պատած...*
*Իսկ այժմ դողում մահի ճանկերում,*
*Սոսկում ես երգում, շշնջում կամաց...*

*Դեղնած ու թառամած, ó, տերև աշնան,*
*Վաղուց չէ՝ ես էլ կեանք էի երգում...*
*Այժմ յուսահատ, թօշնած քեզ նման,*
*Սոսկումն եմ յիշում մահւան ճանկերում...*

Արշակ Տէր Յովսէփեան